վնասակար զանազան միջատներ: Այսուհանդերձ, գիտե՛ք որ մսեղէնները կու գան կենդանիներէն: Ուրեմն, պիտի չօգտագործե՞մք կենդանիները, որպէս սնունդ: Միտք բանին այն պէտք է ըլլայ, որ պէտք չէ չարչարել կենդանիները զանոնք մորթած ծամանակ. պէտք է վարպետօրէն կտրուրել գործողութիւնը, արագ եւ սուր դանակով: Բան մը եւս, սիրելով եւ պաշտպանելով հանդերձ կենդանիները, մարդիկ պէտք է ըզգուշանան անոնց մօտ ապրելէ, որովհետեւ անասունները ունին զվնասզան մանրէներ, որոնք վտանգաւոր են մարդոց առողջութեան համար: Ինչ կը վերաբերի բոյսերուն, պէտք է որ մարդիկ պաշտպանեն բոյսերը եւ կանաչութիւնը, որոնք կարեւոր են երկրագունդին, որովհետեւ կու տան թթուածին (Oxygen) եւ կը հաւասարակշռեն աշխարհի կլիմայական (Ecologic) վիճակը: Իսկ ծաղիկներն ու բոյսերը իրենց հաճելի գոյներով կը գեղեցկացնեն մեր շրջապատը եւ հանդարտութիւն կու տան մարդոց հոգիներուն:

9.- Արին (Արեւոյշշ) միշտ գուարք եւ խանդավառ է

Եթէ սկսուտ մը կարենայ յաղթահարել դժուարութեան եւ տխրութեան, միշտ ուրախ կ'ըլլայ: Օրինակ, եթէ տրուած է քեզի պարտականութիւն մը՝ ջուր բերել բանակավայր, կրնաս ինքզինքիդ հարցնել, թէ միայն ե՞ս կայի ջուր բերելու համար եւ թէ՛ պիտի յոգնիմ, դժուար է, ծանր է: Այս պարագային տխուր պիտի ըլլաս: Բայց եթէ ըսես ինքզինքիդ, թէ եղբայրներուս կարիքը հոգալու համար այսօր ե՛ս կը բերեմ ջուրը, վաղը ուրիշ մը կը բերէ, պիտի ըլլաս ուրախ, որ բարիք

other harmful pests. However, we know that meat comes from animals. Does that mean we shouldn't use animals for food? While using animals for food is necessary, it is not necessary to torture them while slaughtering them, it must be done correctly and quickly with a sharp blade. One other point about loving and protecting animals, people must take care when they live near animals because they have characteristics that can be dangerous for people. With regards to plants, we must protect the plants and greenery because they are important to our world. They replenish oxygen in the air and they help balance the ecology. Flowers beautify our surroundings and calm people's spirits.

9.- Areen (Arenoushuh) meesht zvalt yev khandavar eh: / An Ari (Arenoush) is always cheerful and enthusiastic.

If a scout can defeat difficulty and sadness, they will always be happy. For example, if you are given the responsibility to collect and bring water to the campsite, you can ask yourself, am I the only one who can bring the water? I'll get tired. It will be difficult and heavy. With this approach you'll be unhappy. If instead you say to yourself, we need water..I can bring it today and somebody else can bring it tomorrow. You'll be much happier and you will have done a good

մը կը գործես եւ օգտակար կ'ըլլաս: Երկրորդ օրինակ մը, բնաանիքով այցելութիւն մը պիտի կատարէք եւ սակայն դուն կ'ուզէիր ընկերոջ մը հետ պաղպաղակ ուտելու երթալ: Կրնաս ըսել, որ տխուր եմ, որովհետեւ ուզածդ պիտի չկարենաս ընել: Բայց կրնաս նաեւ ըսել, որ ոչինչ անթիւ ընկերոջս հետ կ'ըրթամ եւ կ'ըլլան տրախ:

Սկառուտի կ'արտայայտել իր ուրախութիւնը: Խանդավար է, կ'երգէ, կանչեր կ'ընէ: Բայց շատեր կը շփոթեն զւարճութիւնը իրարանցումի՞ն հետ: Խանդավարութիւնը ունի իր կարգն ու կանոնը, որուն սահմաններուն մէջ պէտք է մնայ սկառուտը:



10.- Արին (Արեւոյշ) աշխատասէր եւ կորուսի է

Աշխատասիրութիւնը մարդկային յատկութիւն մըն է: Ան կ'ապահովէ մարդոց գոյութիւնը: Սկառուտը միշտ կ'օգնէ ուրիշին: Գործով, աշխատանքով արդիւնքի հասնելով է որ օգնած կ'ըլլայ: Աշխատանքով օգնած կ'ըլլայ նաեւ ինքզինքին: Աշխատանքով մէկը փորձառութիւն ձեռք կը ձգէ: Կ'ըսուի, որ փորձառութիւնը ամենամեծ դպրոցն է: Աշխատասէր անձ մը իր կատարած գործերուն արդիւնքով կ'ունենայ նաեւ հոգեկան գոհունակութիւն:



and helpful thing. A second example, you are going on a visit with your family but you really want to go get ice cream with your friend. You can say that you are sad because you are not able to do what you want or you can say that you can go with your friend on another occasion and be happy.

A scout expresses their happiness. They have fun, they sing, and they do calls/yells. But many people often confuse having fun with disorderliness. Having fun has it's time and place and limits which a scout stays within.



10.- Areen (Arenoushuh) ashkhadaser yev gorovee eh:

An Ari (Arenoush) hardworking/industrious and vigorous.


Being industrious/hardworking is a human quality. It secures mankind's existence. Scouts always help others. With work and it's results is how scouts are helpful. By working on thing we gain experience. They say experience is the greatest school. An industrious feels satisfaction when they see the results of the work they did.



Կրնա՞ւ երեսակայել ծոյլ սկսուտ մը, ինչպէ՞ս պիտի «Բարձրակայ ու Բարձրացնէ», ինչպէ՞ս պիտի «մի՛շտ օգնէ ուրիշին», ինչպէ՞ս «մի՛շտ պատրաստ» պիտի ըլլայ:

11.- Սկսուպը փնտրեսո՞ղ է


Ծիշոյ բացատրութիւն մը տալու համար, «տընտեսող» բառին կրնանք ըսել, ճիշտ տեղը եւ պէտք եղածը գործածել, պէտք եղած քանակութեամբ միայն: Տնտեսելու մէջ կայ նաեւ հետեւեալը. աշխատանքի մը համար օգտագործել հինգսը կամ անգործածելի առարկաներէ եկած զանազան բաժիններ, օրինակ՝ եթէ ձեռային աշխատանքի մը համար պէտք ունենանք խաւաքարտի, կրնանք գործածել կօշիկի տուփերու խաւաքարտը: Ուրիշ բան մը եւս, գործածուած առարկայ մը, անգամ մը եւս կարենալ գործածելու համար, պէտք է հոգ տանիլ անոր: Օրինակ, ձեռային աշխատանքի մը համար օգտագործուած պարանները պէտք է վերստին քակել ամբողջութեամբ եւ փաթթել, պահել եւ ոչ թէ կրտրտել: Հիւսք կապ մը ընելէ ետք, եթէ պարան աւելնայ՝ պէտք չէ կտրել, այլ ամփոփել եւ պահել, ուրիշ անգամ մը աւելի երկար պէտք ունենալու պարագային գործածելու համար:



Can you imagine a lazy scout? How would they "Elevate themselves and others"? How would they help others? How would they always be prepared?

11.- Scoutuh dndesogh eh: / A scout is manages their resources well.

A good explanation of the word "dndesogh" is to use only what you need at the appropriate time and the appropriate quantity, i.e. do not waste resources. Part of being dndesogh is to reuse/recycle things that you otherwise might throw away, for example if you need cardboard for a craft you can use parts of a shoe box. To reuse things you must take good care of them. For example, when you take apart a structure that you made with ropes, you should carefully undo the knots, wrap and store the rope for future use rather than cut them and throw them away. Also if you make a knot and the rope is too long, you shouldn't cut it but rather roll the extra and tuck it away so that next time when you need a longer rope you will have one.



12.- Արին (Արեւոյշք) մաքոր է մտածումով,
խօսքով եւ գործով

Ինչպէս կարեւոր է մարմինը մաքոր պահել, կարեւոր է նաեւ միտքը մաքոր պահել, որովհետեւ եթէ աղտոտ մարդը ճիւղանդութիւն կը շարաշացնէ մարմինն, այդպէս ալ աղտոտ մտածումը իր վատ անդրադարձը կ'ունենայ սկստութիւն խօսքին եւ գործին վրայ: Եթէ սկստութիւն ուղեղը, միտքը լեզուին գէշ մտածումներով, ան վստահարար պիտի սկսի ստախօսել, բամբասել եւ անվայել բաներ գործածել (խօսք) կամ նոյնիսկ գողնալ ու չարութիւններ քնել (գործ): Դու՞ն որոշէ, սկստութիւն ո՞րն է վայելը – աղտոտ մի՞տք, ստախօսութի՞ւն, զեղծարարութի՞ւն, թշնամութի՞ւն, գողութի՞ւն, թէ մաքոր միտք նուիրական խօսք, հաւատարմութիւն եւ ուղղամտութիւն:



Ահաւասիկ սկստութի դաւանանքին 12 յօդուածները: Թող անոնք ըլլան կեանքի ուղեցոյցդ, եւ բնորոշէ գաւնոնք իբրեւ մեայուն պատուէր: Ապա տես, թէ կեանքդ որքան աւելի ուրախ պիտի ապրիս, որքան աւելի բնկերներ եւ բարեկամներ պիտի ունենաս եւ խիղճըդ որքա՞ն հանգիստ պիտի ըլլայ:

12.- Areen (Arenoushuh) makoor eh mdatsoomov, khoskov, yev gortsov:

An Ari/Arenoush is clean in thought, word (speech), and deed.

Just as it is important to keep our bodies clean, it is also very important to keep our thoughts clean because, as being dirty brings sickness to the body, bad thoughts will have a poor effect on a scout's words and deeds. If a scout's mind is full of bad thoughts, they will surely start to lie, gossip, use bad words (speech) or even steal and do bad things (deeds). You decide, what suits a scout – a dirty mind, lying, being fake, being confrontational, stealing OR good thoughts, speaking nicely, being loyal, and honest?



These are the 12 articles of the scout declaration. Let them be a guide for you. As a result you will see how happy your life will be. You will have more friends and your conscience will be clear.

Կարո՞ւմք .

Անորեալ կեանքի դ տուր 3 օրինակներ, ուր կ'օգնեն ուրիշին.

Ա. -----

Բ. -----

Գ. -----

Complete

Give three example of how you help others in your everyday life

A. -----

B. -----

C. -----

Ամբողջացրո՞ւք հետևելեալ տարբերակը.

	ճիշդ	սխալ
Հանրահասոցին մէջ նրստած ես ու կի՛ն մը կը բարձրանայ ու տեղ չունի նստելու: Իրեն տեղդ կու տաս:		
Ուշ գիշերին ընկերներով կը վերադառնաս շարժապատկերի սրահէն ու ճամբան բարձրաձայն կը խօսիք ծապաւէնին մասին:		
Գրացիին մայրը մահացած է, կը պգուշանաս հեռատեսիլին ձայնը բարձրացրնելու:		
Եկեղեցի կ'երթաս ծովու յարմար կարճ տարատով եւ շապիկով:		
Տեղէ մը ներս մտած աւտեն թոյլ կու տաս որ քեզմէ առաջ անցնին տարեցները:		

Complete to following table:

	Correct	Wrong
<i>You're sitting on the bus and a woman climbs aboard and doesn't have anywhere to sit, you give her your seat.</i>		
<i>You're walking home from the movie theatre late in the evening and speaking loudly in the street about the movie.</i>		
<i>The neighbor's mother has passed away, you're careful to not turn the televisions up too loud.</i>		
<i>You go to church in shorts and a T-shirt.</i>		
<i>When enter somewhere you let people older than you to enter first.</i>		

Գրե՛ 2 օրինակներ, ուր աշխատանքի մը
ընթացքին խնայողութիւն կ'ընես.

Ա.

Բ.


Give 2 examples of how you can conserve during an
scouting activity.

A.

B.

6.- Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը և նշանաբանը

Գծել ասրա ներկի Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը



Հ.Մ.Ը.Մ.ի նշանակն է ՎԱՀԱՆԸ:

Պատասխանել իեռեւեւ այ հարցումներուն.


Ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը

Ո՞վ յղացած է նշանաբանը

Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը գոյգ պարտադրանք կը դնէ հրաքանչիւր միութեանականի և սկաուտի ուսերուն վրայ: Անոնք զարգանալով, փորձառութիւն ձեռք բե-

6. – Homenetmen's Nshanag (Emblem) and Nshanabahn (Motto)

Draw and color Homenetmen's emblem



Homenetmen's emblem is called the VAHAN.

Answer the following questions.

What is Homenetmen's nshanabahn/motto?

Who conceived the motto?

Homenetmen's motto puts 2 responsibilities on each member's and scout's shoulders, by gaining experience

րելով պիտի յառաջանան ու բարձրանան, ապա պիտի քաջալերեն ու օժանդակեն ուրիշներուն, որպէսզի անոնք ալ նոյնպէս բարձրանան: Հ.Մ.Ը.Մ.ականին համար բաւարար չէ միայն բարձրանալ ու դիրքի մը հասնիլ, այլ՝ պէտք է իր գիտցածը, սորվածը, բաժնելով ուրիշներուն հետ, զարգացնէ զանոնք եւ բարձրացնէ իր մակարդակին:


Բանի մը անդ երու մէջ գրէ՛, թէ ի՞նչ պէս կարելի է նշանաբանը գործադրել արօրեայ կեանքի մէջ:

you advance and elevate yourself, then you encourage and support others to advance and elevate themselves. For a Homenetmen member it is not enough to reach a high rank, they must share the experience and knowledge that they have with others to elevate them also.

In a few sentences, explain how you can follow the Homenetmen motto in everyday life.

7.- Հ.Մ.Բ.Մ.ի Սկսուսուրեան
Նշանակը եւ Նշանարանը


Գծել Հ.Մ.Բ.Մ.ի Սկսուսուրեան Նշանակը.



Նշանակիսին սէշ ի՞նչ կը ներկայացնեն
Մասիսը, Արաքս գետը եւ արեւը.

7. – The Homenetmen Scout Nshanahg (Emblem)
and Nshanabafin (Motto)

Draw the Homenetmen Scout Emblem.



In the scout emblem, what does Massis, Arax river, and
sun mean?

Տո՛ւր մնացած բաժիններուն իմաստը.

Հ.Մ.Բ.Մ.ի նշանակը ինչո՞վ կը տարբերի համաշխարհային սկաուտական նշանակէն.

Հ.Մ.Բ.Մ.ի սկաուտները որդեգրած են համաշխարհային սկաուտութեան նշանաբանը, որն է՝

Տո՛ւր այս նշանաբանին իմաստը

Explain the meaning of the other parts of the emblem.

How is Homenetmen Scouting's emblem different than the international scout emblem?

Homenetmen Scouts have adopted the international scout motto, what is it?

Explain the meaning of this motto.

6.- Հ.Մ.Բ.Մ.ի նշանակը և նշանաբանը

Գծել սպա ներկի Հ.Մ.Բ.Մ.ի նշանակը



Հ.Մ.Բ.Մ.ի նշանակն է ՎԱՀԱՆԸ:

Պատասխանել հետևելու հարցումներուն.


Ի՞նչ է Հ.Մ.Բ.Մ.ի նշանաբանը

Ո՞վ յղացած է նշանաբանը

Հ.Մ.Բ.Մ.ի նշանաբանը գոյգ պարտադրանք կը դնէ հրաքանչիւր միութեանականի և սկաուտի ուսերուն վրայ: Անոնք զարգանալով, փորձառութիւն ձեռք բե-

6. – Homenetmen's Nshanag (Emblem) and Nshanabafin (Motto)

Draw and color Homenetmen's emblem



Homenetmen's emblem is called the VAHAN.

Answer the following questions.

What is Homenetmen's nshanabafin/motto?

Bartzratzee Bartzratzoor / Elevate Yourself - Elevate Others

Who conceived the motto?

The famous mathematician Bedros Atrouni

Homenetmen's motto puts 2 responsibilities on each member's and scout's shoulders, by gaining experience


7.- Հ.Մ.Բ.Մ.ի Սկսումունքեան
Նշանակը եւ Նշանաբանը

Գծի Հ.Մ.Բ.Մ.ի Սկսումունքեան Նշանակը.

Նշանակաւորն մէջ ի՞նչ կը ներկայացնեն
Մասիւն. Արաքս գետը եւ արեւը.

7. – The Homenetmen Scout Nshanahg (Emblem)
and Nshanabahn (Motto)

Draw the Homenetmen Scout Emblem.



In the scout emblem, what does Massis, Arax river, and sun mean?

Massis – Represents the grandeur, immortality, and
unwavering faith of our culture

Arax River – Represents the blood spilt by our
forefathers for freedom and independence.

The Sun – Represente the new generation dawning
and the 12 rays of the sun represent the 12 scout

Տո՛ւր մնացած բաժիններու՛ն իմաստը.

Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը ինչո՞վ կը տարբերի համաշխարհային սկաուտական նշանակէն.

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները որդեգրած են համաշխարհային սկաուտութեան նշանաբանը, որն է՝

Տո՛ւր այս նշանաբանին իմաստը

Explain the meaning of the other parts of the emblem.

The three upper leaves represent the three parts of the scout-khosdoo (Oath). The two stars on the upper leaves represent the scouts eyes which are always shining and alert. The two lower outside leaves represent the scout's smile and the lower center leaf represents the scout's truthful tongue.

How is Homenetmen Scouting's emblem different than the international scout emblem?

The international emblem does not have the center part which is related to the Homenetmen scouts


Homenetmen Scouts have adopted the international scout motto, what is it?

"Meesht Badrahsi" (Always Prepared/Ready) [Boy Scouts of America uses the words "Be Prepared"]

Explain the meaning of this motto.

A scout is always prepared to face anything put before him/her because he/she has been educated in various topics and was the self-confidence to take the required action.

8.- Սկաուտութեան Խորհրդանիշը և Նշանաբանը




Լորտ Պէյտըն Փաուըլ սկաուտական շարժումի հիմնադրութեան հետ միատեղ, զայն օժտեց նշանակով մը, որ այլևս պիտի նույնանար սկաուտութեան հետ: Ան ընտրեց Թուշանածաղիկը իբրև նշան: Ինչո՞ւ Թուշանածաղիկը, որովհետև շուշանածաղիկը կը խորհրդանշէ անմեղություն, սրբություն, մաքրություն և այլ վսեմ շատկություններ: Թագադրություններ կամ իշխանություններ ևս կը գործածէին այս ծաղիկը իբրև խորհրդանիշ, զայն բարձրացնելով արքայական մակարդակի:

Ժամանակի ընթացքին, սկաուտները բացատրություն տուին այս ծաղիկին զանազան բաժիններուն: Վերի երեք տերևները կը ներկայացնեն խոստումին երեք յօդուածները: Անոնց վրայի 2 աստղերը կը ներկայացնեն սկաուտին փայլուն աչքերը, որոնք միշտ արթուն են: Վարի 2 ծայրի տերևները կը ներկայացնեն սկաուտին ժպտուն դէմքը, իսկ մէջտեղի տերևը կը ներկայացնէ սկաուտին լեզուն, որ ճշմարիտ է:

Սկաուտները որպէս մղիչ ոյժ, պէտք ունէին նշանաբանի մը: Նշանաբանը բառ մը կամ 2 բառերով կազմուած կ'ըլլայ և մարդիկ զայն կ'ունենան իբրև կեանքի ուղի:

8. – Scouting's Emblem and Motto



When Lord Bayton Powel founded scouting he choose an emblem that would become one with the scouting movement. He chose the "Shooshahnahdzahgheeg" (the Lily) as the emblem. Why the Shooshahnahdzahgheeg? The Shooshahnahdzahgheeg represents innocence, goodness, cleanliness, and other noble characteristics. Kings and Princes also use this flower as their emblem, thus elevating scouting to a higher level.

Over time, scouting gave meaning to the various parts of the emblem. The three upper leaves represent the three parts of the scout khosdoom (Oath). The two stars on the upper leaves represent the scouts eyes which are always shining and alert. The two lower outside leaves represent the scout's smile and the lower center leaf represents the scout's truthful tongue.

As a driving force, scouting needed a motto. A motto is a word or two that people can use as a rule to live by.

Սկաուտինն նշանաբանը «Մի՛շտ պատրաստ» է: Սկաուտը մի՛շտ պատրաստ է դիմակալելու որևէ պահանջ, որովհետեւ զարգացած է զանազան գիտելիքներով եւ անոնց փորձ-կիրարկումով ինքնավստան դարձած է, ու գիտէ վարուելակերպը որևէ հարցի պարագային: Անշուշտ, շատ մը անգամներ օժանդակութիւնները կամ պահանջները պիտի պարտադրեն գոհողութիւն եւ հաճոյքէ զրկանք. ասիա հոս է որ սկաուտը, «Մի՛շտ պատրաստ» նուիրումով, պիտի կատարէ պէտք եղածը, առանց դժուարանալու, առանց վարանելու: Օրինակ, արկածի մը պարագային, նախնական դարմանումներու գործադրութեամբ (First aid) սկաուտը կրնայ կեանք մը փրկել, կամ երբ պզտիկ մը կորսուած է ու առանձին մնացած, պիտի առաջնորդէ զինք կեդրոն եւ զայն ապահով ձեռքերու լանձնէ:

Յիշէ՛. սկաուտինն նշանաբանն է՝

«Մի՛շտ պատրաստ»



The scouting motto is "Meesht Badrahist" (Always Prepared/Ready) [Boy Scouts of America uses the words "Be Prepared" which has the same meaning]. A scout is always prepared to face anything put before him/her because he/she has been educated in various topics and was the self-confidence to take the required action. Of course sometimes the action required will require sacrifice and may not be fun but a scout takes is on with the attitude of "Mesht Badrahist" and completes the work without complaint or difficulty. For example in the case of an accident a scout can administer First Aid and save a life or if a small child is lost and alone a scout will take them to a central location and deliver them to safe hands.

Remember the scout motto is:

"Meesht Badrahist"
"Always Prepared"



Ի՞նչ կը ներկայացնէ Շուշանածաղիկը
♦ Վերի երեք տերեւները կը ներկայացնեն

----- կը ներկայացնեն
սկառուտին արթուն աչքերը

♦ Սկառուտին ծպտուն դէմքը ներկայացուած է
----- 2 ծայրի -----

♦ Մէջտեղի տերեւը կը ներկայացնէ -----

*Աւանախան փորձառութենէր գրե՛ 2
օրինակ, ուր կիրարկած ես նշաններսը.*

Միշտ պատրաստ ըլլալը սկառուտին համար հա-
ճոյք է եւ ո՛չ թէ պարտադրանք:

What does the Shooshafnahdzahigheeg represent?

• *The upper three leaves represent*

----- *represents the*
scout's alert eyes

• *The scout's smiling face is represented by the*
----- *2 outside* -----

• *The middle leaf represents* -----

*Give two examples from real life where you have
demonstrated the scout motto.*

*Always being prepared is a pleasure for a scout not a
burden.*

9.- Խոստման Արարողության Իմաստը և Խորհուրդը

Ժամը 10ն է: Սկստական խումբը պատուի կանգնած է: Գրոշակները կը ծածանին: Եղբայր Ռազմիկ խումբին դիմաց ծունկի եկած է: Կղերականը ոսկի խաչը և Աւետարանը ձեռքին, իր օրհնութիւնը կու տայ: Կարծես Աւարայրի դաշտն է: Հայկական բանակները պատրաստ կանգնած են: Ղեռնդ Երէց օրհնութիւն կու տայ զօրավար Վարդան Մամիկոնեանին, որ ծունկի եկած, Աւետարանին ու դրոշակին վրայ խոստում կու տայ՝ պահպանելու հայ ժողովուրդը դաժան թշնամիէն և պահելու քրիստոնէական կրօնը:

Այդ առաւօտ երբ տեսայ եղբայր Ռազմիկը, նկատեցի թէ ան շատ ուրախ և հպարտ էր: Ուզեցի գիտնալ պատճառը:

- Եղբայր Մհեր, ըսաւ ան, ահա ատենէ մը ի վեր կը մասնակցիմ սկստական հաւաքոյթներու, սորվեցայ գիտելիքներ և զանոնք գործադրելով պիտի օգնեմ ուրիշին, սորվեցայ հաւատարիմ ըլլալ Աստուծոյ, վարժուեցայ նաև հնազանդիլ օրէնքներու: Ժամը 10ին խոստում պիտի տամ:

- Ըսէ՛ տեսնեմ, խոստում տալ ի՞նչ ըսել է:

- Այո՛, գիտեմ, սկստուս պիտի ըլլամ և լրիւ տարազ պիտի հագուիմ, փողկապ, գլխարկ պիտի ունենամ և գօտի պիտի կապեմ:

- Այս բոլորը ճիշդ է եղբայր Ռազմիկ, բայց անելի

9. – The Oath Ceremony and its Meaning

It's 10 o'clock, The scouts are standing saluting. The flags are waving. Yeghpayr Razmig is kneeling in front of his group. A clergy man with a golden cross and a bible in his hand gives his blessing. It's like it field of Avarayr. Ghevond Yeretz blesses the hero Vartan Mamigonian, who is kneeling, as he takes an oath on the bible and cross to protect the Armenian people against their fierce enemy and keep their Christian faith.

That morning when I saw yeghpayr Razmig, I noticed that he was very happy and proud. I wanted to understand why.

–“Yeghpayr Mher”, he said, “it has been a while that I have been participating in scouting activities. By learning various topics and using the knowledge I will help others. I learned to be loyal to God and became used to following the rules. At 10 o'clock, I will take my oath.”

–“Tell me what it means to take your oath.”

–“Yes, it mean that I will become a scout and wear a complete uniform with a poghgab (neckerchief), glkharg (hat), and belt.”

–“That is all correct yeghpayr Razmig, but more

կարելորդ այն է, որ խոստում տալէն վերջ, երբ ըսես որ բան մը պիտի ընես, անպայման ընես: Հիմա պիտի յայտնես, թէ քեզի վստահուած որեւէ պահանջ կամ առաջարկ *անպայման* պիտի գործադրե՛ս, հետեւողութեամբ, բժախնդրութեամբ, նաեւ պիտի ունենաս Արիին (Արեւոյշին) դաւանանքը, որպէս կեանքի ուղեցոյց: Հոն ճշդուած պայմանները պիտի գործադրես: Գիրիին է խոստումը արտասանելը եւ ըսելը, բայց կրնայ դիրիին չըլլալ գործադրելը: Յուսանք մինչեւ կեանքիդ վերջը կը յարգես խոստումդ Աստուծոյ եւ ծնողքիդ օրհնութեամբ:

Եւ ահա դարձեալ կը տեսնեմ եղբայր Ռազմիկը ձախ ձեռքով Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը բռնած եւ աջով ալ բարեւի կանգնած, բարձրաձայն եւ կտրուկ կ'արտասանէ Արիին խոստումը:

** Պատուոյս վրայ կը խոստանամ ըլլալ
հաւատարիմ Աստուծոյ եւ հայրենիքիս:*

** Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ
պարտականութեան գիտակից արի
եւ վեհանձն մարդ:*

** Հնազանդիլ Հ.Մ.Ը.Մ.ի Արիներու
դաւանանքին:*

Եղբայր Յովիկ, խումբի խմբապետը իրեն կ'անցրանէ փողկապը եւ գլխարկը, ինչպէս նաեւ ձախ գրպանին վրայ կ'ամրացնէ սկաւառութեան խորհրդանիշ՝

more importantly, after you take your oath, when you say you will do something you must do it. Now you must complete any responsibility entrusted to you with diligence and attention to detail. You also now have the Ari/Arenoush declaration to guide your life, you should follow this guidance. It's easy to recite an oath but it might not be so easy to follow it in real life. We hope that you respect the oath you took, with God's and your parents' blessing, for the rest of your life."

Later, I see Yeghibayr Razmig holding the Homenetmen flag with his left hand, saluting with his right hand and reciting the scout oath with a loud and clear voice.

- *Batvoos vrah guh khiosdanam uhfal havadareem Asdoodso yev tsarayel Azgees oo Hayreneekes*
- *Meeshd ognel ooreesheen yev gordsel eebrev bardganootian geedageets, ari yev vehandzn mard.*
- *Hnazandeel Homenetmenee Arineroo (Arenoushneroo) davanankeen.*

Yeghpayr Hovig, the group leader, gives him his poghigahp (neckerchief) and hat and for his left pocket the scout emblem

Ծուշանաձողիկը: Այսպիսով, եղբ. Ռազմիկ վերջնականապես մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի սկաութական ընտանիքին:

Տո՛ւր օրինակ մը, ուր աշակերտ մը իր խոստումը չի լարգեր:

Տո՛ւր օրինակ մը, ուր սկաութ մը իր խոստումը կը լարգէ:

Տո՛ւր օրինակ մը, ուր գործաւոր մը խոստում կու տայ:

the Shooshahmadzagheeg. This is how Yeghpayr Razmig finally became a part of the Homenetmen scout family.

Give an example of how a student might not honor a promise they make:

Give an example of how a scout can honor the scout oath:

Give an example of a worker that gives an oath:

**10.- Քարեւներու Տեսակները
եւ Անոց Գործածութեան Եղանակը**

Ի՞նչ կ'ընես երբ ծանօթ մը կամ բարեկամ
մը տեսնես.

Ի՞նչն՞ է կը բարեւես.

Երբ երկու անձեր իրարու հանդիպին զիրար կը
բարեւեն, ցոյց տալու համար որ զիրար կը ճանչնան,
բարեկամ են եւ ծանօթ: Զանազան մշակոյթներ ունին
բարեւելու տարբեր ձեւեր: Օրինակ, ձեռք թօթուել,
քիթ-քիթի քսել, ձեռքը ճակտին ու քերձին դնել եւ
սալա բանալ՝ դէպի առջեւ տանելով կամ բռունցքը
իրարու զարնել, եւայլն :

Սկաուտներն ալ իրենց կարգին պէտք է բարեւեն
զիրար ու իրենց բարեկամներուն, որովհետեւ ամէն
սկաուտ բարեկամ է ուրիշ սկաուտի:

*Գրէ՛ դաւանանքի քիւ 5 յօդուածը. ուր
կը խօսի սկաուտներու բարեկամութեան
մասին.*

**10.- Different Greetings/Salutes
and When They Are Used**

What do you do when you see a friend or a family member?

Why do you greet them?

*When two people meet they greet each other to show that they
know each other, are friends, and acquaintances. Different
cultures have different ways to greet. For example, shaking hands,
rubbing noses, put their hand to their forehead and mouth and then
moving it forward, or bumping fists.*

*Scouts also need to greet each other and their friends, because
scouts are friends with all other scouts.*

*Write the 5th scout commandment which speaks about
scouts being friends with all other scouts.*

1.- Պաշտօնակալն բարև

Պատուի ա՛ն հրահանգին, կթէ սկսույթ լման տարագ հագած է, կը գործադրէ հրահանգը աջ ձեռքով. միջնեմատը կը դպչի ճակատին, արմուկը հորիզոնական, թելը և ձեռքը նոյն դիրքի վրայ:



Աջ ձեռքը կ'ըլլայ նկարին մէջ ցոյց տրուած ձեւով:

Անբողջացո՛ւր.

Ցուցամատը, միջնեմատը և մատնեմատը կը խորհրդանշեն -----

----- բաժինները:

Բթամատը նկոյտին վրայ կը խորհրդանշէ պատկիս

մեծին:



Մտնօթ. Հին ժամանակներուն թագաւորներն ու թագուհիները կը փոխադրուէին աթոռներու վրայ, ուսամբարձ (շալկրած ուսի վրայ): Պարզ ժողովուրդը որպէսզի ցոյց տայ, թէ չ'ուզէր թագաւորին մակարդակին բարձրանալ, ձեռքով կը զոցէր իր տեսողութիւնը, այդ իմաստով մնացած է բարեւելու այս ձեւը:

1.- Formal salute

'Bahitvee ahr' hrahangeen (upon the command 'salute', if the scout is in full uniform, they will salute with their right hand. The middle finger will touch their forehead and their arm and hand will be horizontal.



The right hand will be as shown in the picture.

Complete the sentence

The index, middle and ring fingers represent the -----

The thumb over the pinky represents that younger people -----




Note: In old days kings and queens were carried on chairs on servants shoulders. In order to show the king that they did not want elevate themselves to the king level, the regular people shaded/covered their eyes from looking up as the king passed, the formal salute is left from those times.

2.- *Գաւազանով բարեւ*


Երբ սկաուտը իր ձեռքին գաւազան ունի, բարեւ կու տայ յատուկ ձեւով:

Պատուի ա՛ն հրահանգին, պատրաստ վիճակի մէջ, աջ ձեռքով բռնած գաւազանը կը փոխանցէ ձախ ձեռքին: Կը բարձրացնէ գետնէն քիչ մը վեր՝ մօտ 20 cm (8 inch) ու աջ ձեռքը բարեւելու ձեւով կը տանի դէպի գաւազան ու ձախ բռունցքէն վեր դնելով ուղիղ կը կանգնի:



3.- *Ձեռնուիլ*

Տարբերելով բոլոր մարդոցմէ, սկաուտը կը ձեռնուի ձախ ձեռքով, ճկոյթը աճքը-



նելով դիմացինի ճկոյթին եւ ցուցամատը դնելով անոր բազկերակին վրայ: Իրարու ձախ ձեռք թօթուելով եւ սեղմելով, սկաուտները իրենց սրտերուն մօտիկ ըլլալը կը յիշեցնեն:

4.- *Գլուխով*. անշուշտ կը պատահի որ սկաուտ մը պէտք ունենայ բարեւելու եւ սակայն ձեռքերը զբաղած են (առարկայ շալկած է): Այս պարագային սկաուտը գլխու պզտիկ շարժումով մը բարեւ կու տայ:

2.- *Gavazanov barev*


(greeting/salute with a stick
When a scout is holding a stick like a flag there is a specific way to salute.

Bahtvee ahr' hrahangeen (upon the command 'salute', the scout will stand at attention, raise the stick with their right hand about 8 inches off the ground, form a salute with their left hand, raise their forearm to point at the stick and form a 'L' with their left arm.



3.- *Shaking hands,*


Different than most people, scouts shake hands with their left hands.



The lace their pinkies and place their index fingers on the pulse of the other person. By firmly shaking hands with their left hand the scouts remind each other that their hearts are close.

4.- *With Your Head* Of course there will be times when a scout must great somebody but their hands are full (carrying something). In this case the scout can greet somebody with a small movement of their head.

Սկաուտները պարտաւոր են բարեւելու իրենց մեծաւորին, այսպէս ռեւէ սկաուտ իրմէ բարձրաստիճան սկաուտին հետ խօսելէ առաջ պարտի «լման բարեւ» տալ եւ բարեւին պատասխանը ստանալէ ետք միայն խօսելու սկսիլ:



Scouts must greet their seniors, in this way before a scout speaks to a leader with a higher rank they must salute the person and get a greeting in return before speaking.



11.- Հ.Մ.Ը.Մ.ի Սկսուտական Տարագին Չանագան Մասերը

Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտները կը հագնին տարագ: Ան պետք է ըլլայ միշտ լման, մաքուր եւ կանոնաւոր սկսուտին նման:

Իւրաքանչիւր երկրի մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ական սկսուտին տարագը կը պատշաճի տեղւոյն սկսուտներու տարագին, սակայն միշտ կտորներ կան, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր սկսուտները ունին իրենց տարագին վրայ, ըլլան աւոնք Հայաստան, Միջին Արեւելք, Եւրոպա կամ Ամերիկա:

Թուէ՛ այն հինգ կտորները, որոնք կը կրեն Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր սկսուտները.

- 1.-----
- 2.-----
- 3.-----
- 4.-----
- 5.-----

Գրէ՛ հագած տարագիդ մանրամասնութիւնները.

Պերէ, պոքր, գոակ-----
 Ի՞նչ գոյն շապիկ-----
 Երկա՞ր թէ կարճ տարատ եւ ի՞նչ գոյն-----

 Գուլպային գոյնը-----
 Ուրիշ ի՞նչ նշաններ ունիս-----
 Տարագը-----

11. – The Various Parts of the Homenetmen Scout Uniform

Homenetmen scouts wear a Daraz (uniform). That daraz should always be complete, clean, and orderly like a scout.

The uniforms of Homenetmen scouts from different countries are similar to the scout uniforms of the country they live in but there are parts that all Homenetmen Scout from around the world share whether they are from Armenia, the Middle East, Europe, or America.

Write five things that all Homenetmen scouts have as part of their uniform.

- 1.-----
- 2.-----
- 3.-----
- 4.-----
- 5.-----

Complete the details of the uniform you are wearing

What kind of hat (beret, cap...)?-----
 What color Shabeeg (shirt)?-----
 Long or short pants and what color are they?-----

 Color of your socks?-----
 What other patches/badges do you have?-----
 Your uniform is-----
